
ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏՈՒ ԵՎ ՄԵՎՇՈՎՅԱՆ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ
ԽՆԴԻՐԸ 1918 – 1923 ԹԹ.

ԳԱՍՊԱՐՅԱՆ Ա. Ս.

Լինելով մեծ տերությունների միջև լուրջ մրցակցության առարկա և մասնավորապես անգլո-ռուսական հակասությունների տարրերից մեկը՝ սևծովյան նեղուցներն Առաջին աշխարհամարտի ընթացքում կարևոր տեղ էին զբաղում թե՛ Անտանտի և թե՛ Եռյակ դաշինքի տեսանկյունից: Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները խիստ շահագրգռված էին ցարական Ռուսաստանի կողմից ահռելի մարդկային ռեզերվների «մատակարարումներում», և դրանով էին բացատրվում նեղուցների վերաբերյալ նրանց կողմից Ռուսաստանի հետ կնքված համաձայնագրերը: Եվ որքան ճիշտ էր այն, որ «Ռուսաստանի՝ պատերազմի մեջ մտնելու հիմնական պատճառներից էր Կոստանդնուպոլսին ու Դարդանեղին իշխելու ձգտումը»¹, նույնքան էլ հիմնավոր էր այն, որ «Կոստանդնուպոլսին ու նեղուցները մնում էին պատերազմի նպատակը, վճար՝ պատերազմում Ռուսաստանի մասնակցության դիմաց»²:

Նեղուցների խնդիրն այնքան էր կարևորվում ռուսաստանյան դեկավարության կողմից, որ դրանց նվաճման գաղափարն իբրև արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիր ոչ միայն ցարական կառավարությունից ժառանգվեց Ժամանակավոր կառավարությանը, այլև վերջի-նիս արտաքին քաղաքականության կարևորագույն նպատակներից էր: Պատա-հական չէ, որ Ժամանակավոր կառավարության արտգործնախարար Պ. Միլյուկովը կրում էր հեզնական «Դարդանեղսկի» տիտղոսը: 1917 թ. ապրիլի 18-ին նա հանդես եկավ Անտանտի դաշնակիցների առջև ստանձնած պարտավորություններին հավատարիմ մնալու վերաբերյալ իր հայտնի հայտարարությամբ, որտեղ հիշատակվում էին նաև Կոստանդնուպոլսի ու նեղուցների վերաբերյալ դաշնակիցների տված խոստումները: Հիշյալ ելույթը Ռուսաստանի ներքաղաքական կյանքում չընկալվեց՝ առաջ բերելով կառավարական ճգնաժամ: Մակայն իրավիճակը գրեթե չփոխվեց կոալիցիոն կառավարության օրոք, որում Պ. Միլյուկովին փոխարինեց Մ. Տերեշչենկոն, իսկ Ա. Կերենսկին զբաղեցրեց ռազմական նախարարի պաշտոնը՝ Ա.Գուչկովի փոխարեն: Հետագայում, Պ. Միլյուկովին քննադատելով, Ա. Կերենսկին գրում էր, որ «Պ. Ն. Միլյուկովը արտաքին գործոց նախարարի պաշտոնը ստանձնեց՝ ունենալով արտաքին քաղաքականության լավ կշռադատված պլան, որը միանգամայն համապատասխանում էր 1916 թ. աշնան իրողությանը, սակայն 1917 թ. մարտին ոչնչի պետք չէր»³: Ա. Կերենսկին Պ. Միլյուկովի

¹ Покровский М. Н., *Империалистическая война*, М., 1928, с. 11.

² Адамов Е. А., *Константинополь и проливы*, М., 1923, с. 91.

³ Kerenski A., *La Revolution Russe (1917)*, Paris, 1928, p. 136.

անհաջողությունը բացատրում էր նրանով, որ «կյանքը Միլյուկովի համար ավելի հասկանալի էր գրքում կամ պատմական փաստաթղթում, քան իրականության մեջ»⁴, և նա հաշվի չառավ, որ «նոր Ռուսաստանն... ուներ իր առանձնահատուկ հոգեբանությունը», և չկարողացավ «գործել երկրի նոր հոգեբանության պահանջներին համապատասխան»⁵:

Անշուշտ, ամբոխավարական հնարքներին տիրապետելու տեսանկյունից Պ. Միլյուկովը զգալիորեն զիջում էր Ա. Կերենսկուն: Սակայն հայտնի է նաև այն, որ «երկրի նոր հոգեբանության պահանջներին» չկարողացավ հարմարվել նաև Ա. Կերենսկին: Եվ դա ունեցավ ավելի ծանր հետևանքներ: Սակայն ակնհայտ էր, որ պատերազմը շարունակելուց և տարածքային նվաճումների գայթակղիչ հեռանկարից չէր կարող հրաժարվել ռուսական կառավարության անդամ և ոչ մի քաղաքական գործիչ: Այս տեսանկյունից պետք է դիտարկել այն իրողությունը, որ Պ. Միլյուկովի հայտարարությունից ընդամենը երկու ամիս անց Ա. Կերենսկու հրամանով ռուսական զորքերն անցան հարձակման, որն այս պատերազմում վերջինն էր լինելու:

Պատերազմից հետո նեղուցների խնդիրը չկորցրեց իր կարևորությունը, թեև արդեն ընդունել էր բոլորովին այլ բնույթ: Այժմ խոսքը ոչ միայն նեղուցներով անցնող առևտրական ճանապարհներին տիրելու մասին էր, այլև տերությունների միջև ընթանում էր պայքար՝ այդ կարևորագույն ռազմավարական ու քաղաքական հենակետին տիրելու նպատակով: Եվ, ընդհանրապես, նեղուցների գոտում ունեցած ռազմավարական ու քաղաքական շահերը գնալով գերիշխում էին տնտեսականին: Նոր էր և այն, որ չնայած տերությունների՝ հիմնականում Անգլիայի ու Ֆրանսիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի միջև եղած հակասություններին, դրանք բոլորն էլ ի դեմս սևծովյան նեղուցների, տեսնում էին մի յուրահատուկ արգելապատնեշ, և այդ պայքարն ընդունում էր այլ բնույթ, կապված այն իրողության հետ, որ հիշյալ երկրները ձգտում էին նեղուցների գոտին վերածել հարմար ռազմավարական հենակետի, որը կարող էր հետպատերազմյան աշխարհում օգտագործվել ամենատարբեր նպատակներով, այդ թվում և Խորհրդային Ռուսաստանի դեմ հնարավոր գործողությունների ընթացքում:

Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածի ընթացքում տեղ գտած և նեղուցներին անմիջականորեն վերաբերող իրադարձությունների քննարկման դեպքում հիշյալ ժամանակահատվածը կարելի էր բաժանել երեք փուլի. Փարիզի հաշտության կոնֆերանսը և դրա հետևանքով Վերսալյան համակարգի շրջանակում ստորագրված Սևրի հաշտության պայմանագիրը, Լոզանի կոնֆերանսը (1922 թ. նոյեմբերի 20 - 1923 թ. հուլիսի 24) և Մոնտրեի կոնֆերանսը (1936 թ. հունիսի 22 - հուլիսի 20):

Փարիզի կոնֆերանսում Չորսի խորհրդի քննարկումների ընթացքում՝ 1919 թ. մայիսի 21-ին, Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը բրիտանական

⁴ Նույն տեղում, էջ 135:

⁵ Նույն տեղում, էջ 136:

կառավարության անունից հանդես եկավ պաշտոնական առաջարկով, որը նախատեսում էր ԱՄՆ-ին հանձնել ոչ միայն Ստամբուլի, Բոսֆորի, Դարդանելի, Հայաստանի և Կիլիկիայի մանդատները, այլև ընդարձակել ԱՄՆ-ի ենթամանդատային տարածքը՝ վերջինիս հանձնելով նաև Անատոլիայի մանդատը, Հայաստանի մանդատի մեջ մտցնելով նաև «ռուսական Հայաստանի, Ադրբեջանի և ամողջ Կովկասի տարածքի նկատմամբ ժամանակավոր մանդատը՝ ընդհուպ մինչև ռուսական խնդրի լուծումը»⁶: Հիշյալ առաջարկն առաջ բերեց Ֆրանսիայի դժգոհությունը, որը հավակնում էր առնվազն Անատոլիայի մանդատին և առնվազն իտալական կողմի օգնությամբ մտադիր էր բացառել հիշյալ առաջարկի իրագործումը⁷:

Իր հերթին, ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը բավական զուսպ ընդունեց Լլոյդ Ջորջի առաջարկները՝ նշելով, որ դրանք լրջորեն պետք է կշռադատի, և որ իրեն դժվար թե հաջողվի սենատի ընդդիմությունը համոզել Անատոլիայի մանդատի ընդունման նպատակահարմարությունը⁸: Այնուհանդերձ, ԱՄՆ-ի նախագահը ցանկալի էր համարում նման մանդատի ստանձնումը, թեև, հասկանալով իրական բարդությունները, շտապելուց խուսափում էր: Հիշյալ խնդրում պարզություն կարող էր մտցնել Քինգ-Քրեյնի հանձնաժողովը: Չորսի խորհրդի հանձնարարությամբ երկու ամերիկացի գործիչների՝ Հենրի Քինգի և Չարլզ Քրեյնի գլխավորած հանձնաժողովն այցելեց Ստամբուլ, Սիրիա, Միջագետք (Իրաք) և վերադառնալով Փարիզ՝ 1919 թ. հունիսի 28-ին հաշտության կոնֆե-րանսին ներկայացրեց իր առաջարկները հիշյալ տարածքների մասին և Թուրքիայի մնացյալ հատվածների վերաբերյալ իր տեսակետները⁹: Այդ հանձնաժողովը գտնում էր, որ Օսմանյան պետությունը պետք է բաժանվի երեք մասի (Հայաստան, Կոստանդնուպոլսի Միջագետքային Պետություն և Փոքրասիական Թուրքիա), որից յուրաքանչյուրը պետք է առանձին մանդատ ներկայացնի: Գրեթե բոլոր դեպքերում էլ ցանկալի էր համարվում ամերիկյան մանդատը:

Նեղուցների խնդրի քննարկման տեսանկյունից հատկապես կարևորվում էր «Կոստանդնուպոլսի Միջագետքային Պետության» ստեղծման գաղափարը: Զեկուցագրի համաձայն, Սև ու Միջերկրական ծովերի միջև ընկած նեղուցները շոշափում են բազմաթիվ երկրների շահերը, և նրանք կարող են չհամաձայնել, որ

⁶ *Papers Relating to the Foreign Relations of the United States. The Paris Peace Conference 1919, Washington, 1947* (այսուհետև՝ *PPC*), vol. V., p. 771.

⁷ Նույն տեղում, էջ. 762:

⁸ Նույն տեղում, էջ. 765:

⁹ „*The King - Crane Report on the Near East. A Suppressed Official Document of the U. S. - Government*“. December 2, 1922, I-XVII, տե՛ս նաև, *PPC*, V. XII, p. 747 - 848 Ա. Միլլերը, սակայն, նշում էր, որ Քինգ-Քրեյնի հանձնաժողովի զեկուցագիրը պատրաստ էր 1919 թ. օգոստոսի 20-ից ոչ ուշ, որից հետո հանձնաժողովը վերադարձավ Փարիզ (*Миллер А. Ф. Турция: актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983, с. 163.*): Ա. Միլլերը ելնում էր այն իրողությունից, որ զեկուցագրում խոսվում էր սպասվող Սվազի կոնֆերանսի մասին, որը «պետք է հրավիրվի օգոստոսի 20-ին», (*PPC*, V. XII, p. 835).

ներուցները պատկանեն որևէ առանձին պետության՝ գտնելով, որ դրանք պետք է մշտապես բաց լինեն ազատ անցման համար¹⁰: Դրանից ելնելով՝ առաջարկվում էր ստեղծել «Կոստանդնուպոլսի Միջազգային Պետություն», որի մանդատը խորհուրդ էր տրվում հանձնել ԱՄՆ-ին: Կոստանդնուպոլսի Միջազգային Պետությունը պետք է ունենար մոտավորապես երկու միլիոն բնակչություն և ընդգրկեր Բոսֆորի ու Դարդանելի գույգ ավերը, Մարմարա ծովը, Եվրոպական Թուրքիան, իսկ Ասիայում՝ հսկայածավալ մի տարածք, որն արևելքից հարում էր Բոսֆորին, Մարմարա ծովին ու Դարդանելին: Ընդ որում, այդ սահմանների ընդարձակումը չէր բացառվում¹¹:

Սակայն ամերիկյան սենատում գրեթե ամբողջ Թուրքիայի մանդատի ընդունման հաստատումը դժվարին խնդիր էր: Այն էլ ավելի բարդացավ տարածաշրջան Ջ. Հարբորդի այցից հետո (1919 թ. աշնանը): Իր զեկուցագրում Ջ. Հարբորդն այն միտքն էր զարգացնում, որ միայն Հայաստանի մանդատի ընդունումը, նույնիսկ Անդրկովկասի հետ, շահավետ չէ, և անհրաժեշտ է նաև ստանալ ամբողջ Եվրոպական Թուրքիայի ու Անատոլիայի մանդատը: Եվրոպական Թուրքիայի մանդատը պետք է ներառեր նաև Կոստանդնուպոլիսը: Սակայն բնական է, որ ԱՄՆ-ի սենատը չէր կարող համաձայնել նման ահռելի տարածքների մանդատի ստանձնմանը, ուստի 1920 թ. մերժեց Հայաստանի մանդատը¹²: Հարկ է նշել, որ դեռ դրանից առաջ ԱՄՆ-ը դուրս էր եկել թուրքական և հատկապես նեղուցների խնդրի կարգավորման գործընթացից: Թեև պաշտոնապես Փարիզի հաշտության կոնֆերանսն իր աշխատանքները շարունակեց մինչև 1920 թ. հունվարի 21-ը, արդեն իսկ 1919 թ. հոկտեմբերից սկսած՝ ԱՄՆ-ի պատվիրակներն անցան դիտորդի կարգավիճակի: 1919 թ. նոյեմբերին նրանք դուրս եկան Փարիզի կոնֆերանսի ընթացքում կազմավորված բոլոր այն հանձնաժողովների կազմից, որոնց մասնակցում էին (բացառությամբ ռազմատուգանքների հանձնաժողովի), իսկ արդեն դեկտեմբերին ընդհանրապես թողեցին Փարիզը: Սա շրջադարձային կետ էր, որի վերաբերյալ Ա. Միլլերը հետևյալն է գրում. «Այժմ անգլիացիներն ու ֆրանսիացիներն էին որոշում Կոստանդնուպոլսի հարցը, ինչպես և բազմաթիվ այլ հարցեր՝ փաստորեն հաշվի չնստեղծվ ամերիկացիների հետ: Կոնֆերանսի վերջին փուլում Լյոդ Ջորջն ու Ժորժ Կլեմանսոն, առանց ամերիկյան ներկայացուցիչների որևիցե մասնակցության, միմյանց միջև պայմանավորվածություն ձեռք բերեցին Թուրքիայի բաժանման հիմնական սկզբունքների, այդ թվում և Կոստանդնուպոլսի ու նեղուցների ճակատագրի վերաբերյալ: Նրանք երկուսն էլ այժմ համաձայնել էին գործել՝ ելնելով միայն «Եվրոպայի» շահերից: Մի կողմ դրվեցին թե՛ Կոստանդնուպոլսի նկատմամբ ամերիկյան մանդատը, թե՛ «մահմեդական Վատիկանի» վերաբերյալ Վիլսոնի գաղափարը: Պայմանավորվածությունը ենթադրվում էր ուղղորդել այլ

¹⁰ *PPC, V. XII, p. 831.*

¹¹ **Миллер А. Ф.**, նշվ. աշխ., էջ 164-165:

¹² Նույն տեղում, էջ 167, 252 (N 107):

գծով՝ Թուրքիայի մասնատում, «ազդեցության ոլորտներ» Անատոլիայում, նավթային ռեսուրսների բաժանում, իսկ Կոստանդնուպոլսում՝ համատեղ ռազմակալում¹³: Վերանայման տեսանկյունից առաջին քայլը եղավ 1919 թ. դեկտեմբերի 11-ից 1920 թ. հունվարի 21-ն ընկած ժամանակահատվածում Լոնդոնում տեղի ունեցած անգլո-ֆրանսիական կոնֆերանսը՝ Լյոյո Ջորջի եւ Ժորժ Կլեմանսոյի մասնակցությամբ: Կոնֆերանսի ընթացքում որոշվեց հրաժարվել Անատոլիայի նկատմամբ մանդատների մեթոդի կիրառումից¹⁴: Նեղուցների և Ստամբուլի հետ կապված՝ Ժորժ Կլեմանսոն առաջարկեց ամերիկյան մանդատը փոխարինել միջդաշնակցային ռազմակալմամբ՝ սուլթանի անվանական ինքնիշխանության պահպանումով հանդերձ¹⁵: Այդ ծրագրերի իրագործման առումով կարևոր քայլ էր 1920 թ. մարտի 16-ին բրիտանացիների կողմից Ստամբուլի ռազմակալումը: Դա ուներ ոչ այնքան ռազմական, որքան քաղաքական նշանակություն, քանզի թե՛ Ստամբուլը և թե՛ նեղուցների գոտին դաշնակիցների լիարժեք վերահսկողության ներքո էին: Ուստի, քաղաքական տեսանկյունից Անգլիան ձգտում էր Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքումից առաջ բոլորին կանգնեցնել «կատարված փաստի» առջև՝ Ստամբուլի ու նեղուցների նկատմամբ գերիշխանությունն անցել է Անգլիային և իր դաշնակիցներին: Այդ իրողության մասին պետք է վկայեր այն փաստը, որ ռազմակալումը պաշտոնապես իրագործվեց Անտանտի երկրների անունից և դրա վերաբերյալ սուլթանին ու Բ. Դեմալը ներկայացված վերջնագիրը ստորագրվել էր անգլիացի, ֆրանսիացի և իտալացի գերագույն կոմիսարների կողմից՝ դաշնակցային «Օկուպացիոն կորպուսի» անունից¹⁶:

Անկասկած, Ստամբուլի ու նեղուցների գոտու ռազմակալմամբ առաջին հերթին ամրապնդվում էին Անգլիայի դիրքերը հիշյալ շրջանում: Դրա հետ մեկտեղ, հիշյալ քայլը լիովին բխում էր 1919 թ. դեկտեմբեր-1920 թ. հունվար ամիսներին Լոնդոնում ընթացած անգլո-ֆրանսիական կոնֆերանսի որոշումներից: Ավելին, Լոնդոնում ձեռք բերված հիշյալ որոշումները հիմք պետք է դառնային նաև Սան Ռեմոյի 1920 թ. ապրիլի պայմանավորվածությունների համար՝ մարմնավորվելով հատկապես ի դեմս 1920 թ. օգոստոսի 10-ի Սևրի պայմանագրի¹⁷:

Սևրի պայմանագրի «քաղաքական դրույթների» շարքում կարևոր տեղ էր գրավում Կոստանդնուպոլսի ու նեղուցների հարցը: Պայմանագիրը նախատեսում էր, որ Կոստանդնուպոլսի նկատմամբ օսմանյան կառավարության իրավունքներին ու իրավական հիմքերին ոչ մի հարված չի հասցվի, և որ սուլթանն ու Բ. Դեմալը կարող են շարունակել գտնվել այնտեղ՝ պահպանելով վերջինիս՝ իբրև օսմանյան պետության մայրաքաղաքի կարգավիճակը: Սակայն պայմանագրում

¹³ Նույն տեղում, էջ 170:

¹⁴ *Documents on British Foreign Policy 1919-1939. First Series, vol. II, 1919. London, 1946, p. 728.*

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ **Миллер А. Ф.**, նշվ. աշխ., էջ 187:

¹⁷ *Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне. М., 1927, с. 17.*

առկա էր նաև վերապահում, որը հարաբերական էր դարձնում օսմանյան կողմին արված հիշյալ զիջումը: Մասնավորապես, նշվում էր հետևյալը. «Այն դեպքում, եթե Թուրքիան խուսափի հիշյալ պայմանագրի կամ լրացուցիչ պայմանագրերի կամ կոնվենցիաների դրույթների լոյալ կատարումից... դաշնակից պետություններն իրենց իրավունք են վերապահում փոխելու (վերանայելու) նախորդող պայմանը, իսկ Թուրքիան այսուհետև պարտավորվում է ճանաչել ցանկացած որոշում, որ կընդունվի այս առնչությամբ»¹⁸: Եվ միանգամայն ճիշտ է Ա. Միլլերը՝ նշելով, որ «Կոստանդնուպոլիսը Թուրքիային թողնելը նույնիսկ ֆորմալ-իրավաբանական տեսանկյունից կրում էր պայմանական բնույթ, և Կոստանդնուպոլսի նկատմամբ թուրքական ինքնիշխանությունը վերածվում էր կեղծիքի», քանզի Թուրքիայի կողմից «Սևրի պայմանագրի որևիցե դրույթի ցանկացած» խախտումը Անտանտի երկրներին իրավունք էր տալիս վերանայելու նախկին որոշումը և Կոստանդնուպոլիսը հետ վերցնել Թուրքիայից¹⁹:

Սևրի պայմանագրում բավական կարևորվում էր սևծովյան նեղուցների կարգավիճակի խնդիրը: Հիշյալ խնդրին էր նվիրված պայմանագրի երրորդ մասի երկրորդ բաժինը՝ 37-61 հոդվածները և վեց պարագրաֆից բաղկացած հավելվածը: Նեղուցների միջազգային կարգավիճակի շրջանառության մեջ դրվելուց հետո առաջին անգամ էր հաստատվում նման մանրամասն կանոնակարգ: Նեղուցների կանոնակարգի հիմնական էությունն այն էր, որ Դարդանելը, Մարմարա ծովը և Բոսֆորը ներառող նեղուցներում նավարկությունն այսուհետև խաղաղ ու պատերազմական ժամանակներում բաց կլինի բոլոր առևտրական նավերի կամ ռազմանավերի և ռազմական ու առևտրական օդանավերի համար՝ անկախ դրոշից: Աշխարհի ծովային գերտերության կարգավիճակը պահպանող Անգլիայի համար այն նեղուցներում իր գերիշխանությունն ապահովելու ակնհայտ հնարավորություն էր: Ուշադրության է արժանի նաև մեկ այլ փաստ: Նեղուցներին վերաբերող պայմանագրի կետերով որևիցե սահմանափակում չէր նախատեսվում ոչ միայն նեղուցներով նավերի անցման, այլև հիշյալ նավերի մուտքը Սև ծով թույլատրելու վերաբերյալ, ինչն Անգլիային (իբրև ռազմածովային անվիճելի գերազանցություն ունեցող երկրի) և տեսականորեն մյուս բոլոր «հավակնորդ» երկրներին գործնականորեն տալիս էր ոչ միայն նեղուցներում, այլև Սև ծովում սեր ու տիրակալի կարգավիճակ ձեռք բերելու իրական հնարավորություն:

Բոսֆորի, Մարմարա ծովի ու Դարդանելի ծովափնյա շրջանի և ջրային տարածքի նկատմամբ ամբողջ իշխանությունն անցնում էր «միջազգային հանձնաժողովին»: Համաձայն պայմանագրի, այն գործելու էր միանգամայն անկախ՝ ոչ մի կախում չունենալով տեղի իշխանություններից, ունենալով սեփական դրոշը, առանձին բյուջեն, սեփական կառուցվածքը և կազմակերպման համակարգը, ինչպես նաև իր տնօրինության տակ ունենալով «հատուկ ոստիկանության կորպուս» ու ռազմանավեր, ինչը կարող է դիտվել իբրև առանձին

¹⁸ Նույն տեղում, էջ 18:

¹⁹ **Миллер А. Ф.**, նշվ. աշխ., էջ 204:

զինված ուժեր ունենալու ձգտում: Այդ զինված ուժերը կլինեին այնպիսին, ինչպիսին անհրաժեշտ կլինեին հանձնաժողովի գործառույթների իրագործման համար: Նեղուցների միջազգային հանձնաժողովի էության մասին էին հուշում հանձնաժողովի ձևավորման ենթադրվող սկզբունքը, կազմը և որոշումների ընդունման եղանակը: Պայմանագրով նախատեսվում էր, որ նեղուցների միջազգային հանձնաժողովի մեջ կարող էին մտնել Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ռուսաստանի, Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի և Թուրքիայի պատվիրակները: Սակայն վերոհիշյալ երկրները լիովին իրավահավասար չէին: Մասնավորապես, նախատեսվում էր, որ Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի պատվիրակները կունենան երկուական ձայնի իրավունք: Մինչդեռ, Հունաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի և Թուրքիայի պատվիրակները՝ մեկական: Պայմանագրի երկու տարվա ընթացքում նեղուցների հանձնաժողովում նախագահությունն իրագործվելու էր հանձնաժողովում երկուական ձայնի իրավունք ունեցող անդամների կողմից, իսկ որոշումները պետք է ընդունվեին ձայների մեծամասնությամբ, ընդ որում, նախագահի ձայնն ունենալու էր գերակշռություն: Այդուհանդերձ, հանձնաժողովի թե՛ երկուական, թե՛ մեկական ձայն ունեցող անդամներից չորսը հանձնաժողովին կանդամակցեին միայն որոշակի նախապայմանների դեպքում: Այսպես, եթե ԱՄՆ-ի պատվիրակները կարող էին հանձնաժողովին անդամակցել «այն դեպքում և, այն օրից սկսած, երբ Միացյալ Նահանգները կցանկանար անդամակցել հանձնաժողովին, ապա Ռուսաստանի, Բուլղարիայի և Թուրքիայի պատվիրակները՝ մեկ այլ նախապայմանով. եթե հիշյալ երկրները դառնային և, այն պահից սկսած, երբ կդառնային Ազգերի լիգայի անդամ: Սակայն հարկ է նշել, որ հանձնաժողովին Թուրքիայի թեկուզև պայմանական մասնակցությունը դիտարկվում էր իբրև սուլթանական կառավարությանն արված բառացի զիջում, քանի որ Ման Ռեմոյում հաստատված պայմանագրի նախագիծն ընդհանրապես չէր նախատեսում թուրք պատվիրակի ընդգրկումը «նեղուցների հանձնաժողովում»²⁰:

Պայմանագրում նաև նախատեսվում էր, որ հանձնաժողովն ու նրա անդամները կունենան դիվանագիտական արտոնություններ, հանձնաժողովին կփոխանցվեն ծովային ոստիկանության գործառույթներ, ինչպես նաև սանիտարական վերահսկողության, զանազան հարկեր հավաքելու իրավունքներ և այլն: Իսկ 60-րդ հոդվածում հաստուկ նշվում էր, որ թեև նախորդ հոդվածների բովանդակությունից հետևում է, որ նեղուցները պետք է դիտարկվեն իբրև չեզոք ջրեր, դա ամեննին չի սահմանափակում Ազգերի լիգայի որոշումը կատարող պատերազմող տերությունների իրավունքները: Այսպիսով, հիշյալ հոդվածը ենթադրում էր, որ Ազգերի լիգայի խորհրդի որոշման վրա հենվելու և լիգայի դրոշի ներքո գործելու

²⁰ Նույն տեղում էջ 257:

դեպքում Անտանտի երկրները (առաջին հերթին, Անգլիան, ինչպես նաև Ֆրանսիան ու Իտալիան) հնարավորություն կունենային նեղուցներն օգտագործել, թե՛ Սև ծովում և թե՛ անմիջականորեն նեղուցների գոտում ռազմական գործողություններ ծավալելու համար: Առավել ևս, որ պայմանագրի 5-րդ մասում («Ռազմական դրույթներ») առկա էին կետեր, որոնք անմիջականորեն վերաբերում էին նեղուցների գոտու ռազմակալմանը: Ընդհանուր առմամբ, հաստատվում և հստակեցվում էին նեղուցների գոտու սահմանները, ենթադրվում էր այդ գոտու և Էգեյան ծովի հարակից կղզիների ապառազմականացումը: Սակայն անհրաժեշտ էին թե՛ ապառազմականացման գործընթացի նկատմամբ վերահսկման պատասխանատու, թե՛ նեղուցների գոտու անվտանգությունը երաշխավորող պետություններ: Ուստի, պայմանագրի հիշյալ հատվածում նշվում էր, որ ապառազմականացման նկատմամբ վերահսկողությունն իրագործելու են Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան, որոնց իրավունք էր վերապահվում օգտագործել հիշյալ տարածքները: Անգլիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի՝ իբրև, ըստ էության, նեղուցների գոտու անվտանգության և ազատ կարգավիճակի երաշխավորների իրավունքները հաստատվում էին պայմանագրում, որտեղ, մասնավորապես, ասվում էր. «Նշված տերությունները (Անգլիան, Ֆրանսիան և Իտալիան), գործելով համատեղ, հնարավորություն կունենան նշված տարածքներում ու կղզիներում պահպանելու այնպիսի ռազմական և օդային ուժեր, ինչպիսիք նրանք անհրաժեշտ կհամարեն խոչընդոտելու որևէ գործողության կատարմանը կամ նախապատրաստմանը, որն ի վիճակի լինի անմիջականորեն կամ ոչ անմիջականորեն վնասել նեղուցների ազատությանը»²¹: Հարկ է նշել, որ «համատեղ» գործողությունների վերաբերյալ կետը և նման կարգի այլ հիշատակումները լիովին բացակայում էին Սան Ռեմոյում ընդունված փաստաթղթում, և Ա. Միլլերի կարծիքով, «հավանաբար, մտցվել էին իբրև Սպայի կոնֆերանսի ընթացքում ֆրանսիացիներին ու իտալացիներին զիջում՝ 1920 թ. Հուլիսին»²²: Նշելով, որ վերոհիշյալ կետով նեղուցների գոտում Անտանտի գործերի առկայությունը հավերժացվում էր, Ա. Միլլերը գտնում էր, որ ռազմակալմանը «Ֆրանսիայի ու Իտալիայի մասնակցությունն Անգլիայի համար ներկայացնում էր նույնքան աննշան անհարմարություններ, որքան և նեղուցների կառավարման ամբողջ համակարգի «միջազգային բնույթը», քանզի «Հունաստանի միջոցով Անգլիան գերիշխում էր նեղուցների կարևորագույն մատուցներին՝ ծովային (Էգեյան ծովի կղզիները, ներառյալ Դարդանելի մուտքի մոտ գտնվող Իմբրոսը և Տենեդոսը) ու ցամաքային (Իզմիր և Թրակիա)», իսկ Հունաստանի վարչապետ Վենիզելոսի և Իտալիայի արտաքին գործոց նախարար Բոնինևոնգարեի միջև Սևրի պայմանագրին զուգահեռ կնքված պայմանագիրը՝ «Հունաստանին Դոդեկանեսյան բոլոր կղզիների (բացի Հոդոսից) զիջման մասին, լրացնում էր Անգլիայի այդ ստրատեգիական շահերը»²³: Այսպիսով, կարելի է համաձայնել Ա.

²¹ *Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, М., 1927, с. 22.*

²² **Ми́ллер А. Ф.**, նշվ. աշխ., էջ 257-258:

²³ Նույն տեղում, էջ 205-206:

Միլլերի այն տեսակետին, որ «Շուտանդնուպոլիսը և նեղուցները փաստացի անցնում էին Անգլիայի գերիշխանության տակ»²⁴: Սակայն Սևրի պայմանագիրը չմտավ ուժի մեջ և չկիրառվեց: Ուստի, քաղաքական զարգացումների հետևանքով, 1923 թ. պետք է ի հայտ գար նեղուցների վերաբերյալ Լոզանի համաձայնագիրը:

КОНЕЦ ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНЫ И ВОПРОС ЧЕРНОМОРСКИХ ПРОЛИВОВ В 1918-1923 ГГ.

ГАСПАРЯН А. С.

Резюме

После окончания первой мировой войны вопрос черноморских проливов не только не потерял своей актуальности, но стал новой ареной борьбы между победившими странами для овладения этой важной стратегической зоной.

В 1919-1920 гг. шли интенсивные дипломатические переговоры между Большой четверкой по вопросу определения статуса черноморских проливов в контексте территориального разделения Турции. Детально были обсуждены вопросы статуса проливов и функции международной комиссии, созданной в целях управления режимом проливов. В результате подписания Севрского мирного договора по части проливов Великобритания получила бы военно-стратегическое преимущество в бассейне Черного моря в ущерб интересам стран этого региона.

²⁴ Նույն տեղում, էջ 206: